ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի նախագիծը մշակվել է հայ-հարավաֆրիկյան ներդրումային և տնտեսական համագործակցության ակտիվացման և ընդլայնման նպատակով:

Համաձայնագիրը հնարավորություն է ընձեռում իրավահավասարության և փոխշահավետության հիման վրա երկու երկրների միջև զարգացնել երկարատև տնտեսական հարաբերություններ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում:

Համաձայնագիրը ուղղված է ներդրումների փոխադարձ խրախուսմանն ու պաշտպանությանը, մասնավորապես՝ Պայմանավորվող Կողմերի ներդրողներին փոխադարձության սկզբունքով տրամադրվում է առավել բարենպաստության և ազգային ռեժիմ:

Համաձայնագրով տրամադրվում են նաև երաշխիքներ կողմերի ներդրումների օտարման դեպքում ներդրողների իրավունքների պաշտպանության և կորուստների փոխհատուցման համար, ինչպես նաև երաշխավորվում է ներդրումներից ստացվող եկամուտների ազատ փոխանցումը կապիտալի ծագման երկիր և այլ երկրներ:

Համաձայնագիրը իր մեջ ներառում է նաև ներդրումային վեճերի կարգավորման ներպետական և միջազգային պրակտիկայում ընդունված ընթացակարգեր:

Համաձայնագիրը հանդիսանում է տնտեսական բնույթի տիպային համաձայնագիր և համահունչ է Հայաստանի Հանրապետության կողմից որդեգրած արտաքին տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններին և նպատակներին: Նման բովանդակությամբ համաձայնագրեր Հայաստանի Հանրապետության կառավարությունը կնքել է բազմաթիվ երկրների հետ:

Ելնելով վերոշարադրյալից և հաշվի առնելով համաձայնագրի ստորագրման կարևորությունը երկու երկրների պոտենցիալ ներդրողների համար անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտ ձևավորելու առումով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նպատակահարմար է գտնում ներկայացված համաձայնագրի ստորագրումը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ ԿԱՐԵՆ ՃՇՄԱՐԻՏՅԱՆ